

Կ Ի Ո Տ Ո Յ Ի  
Ա Ր Ջ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻԱԿՈՐԿԱԾ ԱԶԳԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Հրատարակվել է Կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարության կողմից ՅՈՒՆԵՊԻ Կոնվենցիաների համար տեղեկատվական խմբի աջակցությամբ:

Տեղեկությունների համար խնդրվում է դիմել հետևյալ հասցեներով.

Climate Change Secretariat  
Haus Karstanjen  
Martin – Luter – King – Strasse 8  
PO Box 260 124  
D – 53153 Bonn, Germany  
Tel (+ 49 – 228) 815 – 1000  
Fax (+ 49 – 228) 815 – 1999  
secretariat@unfccc.de  
<http://www.unfccc.de>

UNEP/IUC  
Geneva Executive Center  
C.P.356  
CH – 1219 Chatelaine, Switzerland  
Tel. (+ 41 – 22) 917 – 8244  
Fax (+ 41 – 22) 797 – 3464  
iuc@unep.ch  
<http://www.unep.ch/iuc>

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1992 թվականին, ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային Կոնվենցիան, կառավարություններն ընդունեցին, որ այն կարող է հիմք հանդիսանալ ապագայում ավելի ակտիվ միջոցառումների համար: Այդ Կոնվենցիան, որը նախատեսում է դիտարկման, քննարկման և տեղեկատվության փոխանակման անընդմեջ գործընթաց, հնարավորություն է տալիս ընդունել լրացուցիչ պարտավորություններ՝ հաշվի առնելով գիտական գիտելիքների և քաղաքական կամքի էվոլյուցիան:

Չարգացած երկրների պարտավորությունների համարժեքության առաջին դիտարկումը անց է կացվել, ինչպես պահանջվում էր, Կողմերի առաջին Կոնֆերանսում (ԿԿ-1), որը տեղի է ունեցել 1995 թվականին՝ Բեռլինում: Կողմերը որոշում են ընդունել, որ զարգացած երկրների պարտավորությունները՝ ուղղված 2000թ. նրանց արտանետումների մակարդակը 1990թ. արտանետումների մակարդակին հասցնելուն, համարժեք չեն Կոնվենցիայի հեռահար նպատակին հասնելու համար, որի իմաստն է թույլ չտալ «վտանգավոր մարդածին ազդեցություն կլիմայական համակարգի վրա»:

Հաշվի առնելով այդ՝ նախարարները և այլ բարձրաստիճան պաշտոնական անձինք ընդունեցին Բեռլինյան մանդատը և սկսեցին բանակցությունների մի նոր փուլ զարգացած երկրների պարտավորությունների ուժեղացման նպատակով: Համաձայնագրի մշակման համար ստեղծվեց Բեռլինյան մանդատի հատուկ խումբ, որը, անցկացնելով 8 նստաշրջան, վերջնական բանակցությունների համար ԿԿ-3-ին ներկայացրեց մի տեքստ:

Այդ կարևոր խորհրդակցությանը, որը տեղի ունեցավ 1997 թվականի դեկտեմբերին՝ Կիոտոյում, Ճապոնիա, մասնակցում էին շուրջ 10000 պատգամավորներ, դիտորդներ և լրագրողներ: Կոնսենսուսի հիման վրա ընդունված որոշման (1/CP.3) մեջ Կոնֆերանսը որոշեց ընդունել Արձանագրություն, որի համաձայն՝ արդյունաբերական տեսակետից զարգացած երկրները 2008-2012 թվականներին ջերմոցային գազերի իրենց համախառն արտանետումները 1990 թվականի մակարդակի համեմատությամբ կկրճատեն նվազագույնը 5%-ով: Իրավական այդ պարտավորությունը թույլ է տալիս հուսալու, որ արտանետումների ավելացման միտումի մեջ, որն այդ երկրներում սկսվել է 150 տարի առաջ, տեղի կունենա պատմական բեկում:

Կիոտոյի Արձանագրությունը ստորագրման համար բացվեց 1998թ. մարտի 16-ին: Այն ուժի մեջ կմտնի 90 օր հետո, երբ այն կվավերացնեն Կոնվենցիայի ոչ պակաս, քան 55 Կողմեր, այդ թվում նաև՝ զարգացած երկրները, որոնց բաժին է ընկնում արդյունաբերական զարգացած երկրների խմբի կողմից ածխածնի երկօքսիդի ընդհանուր արտանետումների նվազագույնը 55%-ը: Այդ ընթացքում Կոնվենցիայի Կողմերը կշարունակեն կատարել Կլիմայի փոփոխության Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները և կպատրաստվեն ապագայում Արձանագրության իրականացմանը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային Կոնվենցիային կից Կիոտոյի Արձանագրության հոդվածները վերնագիր չունեն: Ստորև բերված ընդհանուր բնույթի վերնագրերն ունեն տեքստի հետ աշխատելը հեշտացնելու նպատակ և չեն կազմում պաշտոնական տեքստի մաս, որը սկսվում է 5-րդ էջից:

Ներածական

1. Բնորոշումներ
2. Քաղաքականություն և միջոցառումներ
3. Արտանետումների սահմանափակման և կրճատման որոշակի քանակական պարտավորություններ
4. Պարտավորությունների համատեղ կատարում
5. Մեթոդոլոգիական հարցեր
6. Արտանետումների կրճատման միավորների փոխանցումը և ձեռքբերումը
7. Տեղեկատվության ներկայացումը
8. Տեղեկատվության քննարկումը
9. Արձանագրության քննարկումը
10. Հետագա աջակցություն գոյություն ունեցող պարտավորությունների իրականացմանը
11. Ֆինանսական մեխանիզմը
12. Մաքուր զարգացման մեխանիզմը
13. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես Կողմերի խորհրդակցություն
14. Քարտուղարությունը
15. Օժանդակ մարմինները
16. Բազմակողմանի խորհրդակցական գործընթացը
17. Արտանետումների առևտուրը
18. Չկատարում
19. Վեճերի կարգավորում
20. Ուղղումներ
21. Հավելվածների և ուղղումների ընդունումը
22. Չայնի իրավունքը
23. Ավանդապահը
24. Ստորագրումը և վավերացումը, ընդունումը, խրախուսումը կամ միանալը
25. Ուժի մեջ մտնելը
26. Վերապահումներ
27. Դուրս գալը
28. Աուտենտիկ տեքստ

Հավելված Ա. Ջերմոցային գազերը և սեկտորների/աղբյուրների կատեգորիաները

Հավելված Բ. Կողմերի պարտավորությունները արտանետումների վերաբերյալ

Ստորև բերվող աղյուսակը և ԿԿ երեք որոշումները Կիոտոյի Արձանագրության մաս չեն և բերվում են որպես տեղեկատվության աղբյուր Արձանագրության ընդունման և նրա իրականացման մասին:

Որոշում 1/CP.3. Կլիմայի փոփոխության մասին Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային Կոնվենցիային կից Կիոտոյի Արձանագրության ընդունումը:

Որոշում 2/CP.3. Մեթոդոլոգիական հարցեր՝ կապված Կիոտոյի Արձանագրության հետ:

Որոշում 3/CP.3. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի իրականացումը:

Աղյուսակ. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի ածխածնի երկօքսիդի 1990 թ.

ընդհանուր արտանետումները Կիոտոյի Արձանագրության 25-րդ հոդվածի համար:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ  
ԿԻՈՏՈՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Արձանագրության Կողմերը,

*հանդիսանալով* Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կողմեր, որը հետագայում հիշատակվում է որպես Կոնվենցիա,

*նպատակ ունենալով հասնել* Կոնվենցիայի վերջնական նպատակին, ինչպես այն շարադրված է 2-րդ հոդվածում,

*վկայակոչելով* Կոնվենցիայի դրույթները,

*առաջնորդվելով* Կոնվենցիայի 3-րդ հոդվածով,

*իրականացնելով* Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի առաջին նստաշրջանում 1/CP.1 որոշմամբ ընդունված Բեռլինի մանդատը,

պայմանավորվել են հետևյալի մասին.

### Հոդված 1

Սույն Արձանագրության նպատակների համար օգտագործվում են Կոնվենցիայի 1-ին հոդվածում բերված բնորոշումները: Բացի դրանից.

1. «Կողմերի Կոնֆերանս» նշանակում է՝ Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանս:

2. «Կոնվենցիա» նշանակում է՝ 1992 թվականի մայիսի 9-ին Նյու Յորքում ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության մասին շրջանակային Կոնվենցիա:

3. «Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ» նշանակում է՝ Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի կողմից 1988 թվականին համատեղ հիմնված Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ:

4. «Մոնրեալի Արձանագրություն» նշանակում է՝ 1987 թվականի սեպտեմբերի 16-ին Մոնրեալում ընդունված՝ օգոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն՝ հետագայում նրա մեջ կատարված փոփոխություններով և ուղղումներով հանդերձ:

5. «Ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմեր» նշանակում են՝ ներկա և կողմ կան դեմ քվեարկող Կողմեր:

6. «Կողմ» նշանակում է, եթե համատեքստից այլ բան չի հետևում, սույն Արձանագրության Կողմ:

7. «1-ին Հավելվածում ընդգրկված Կողմ» նշանակում է՝ ուղղումներով Կոնվենցիայի 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմ կամ՝ Կողմ, որը ներկայացրել է հավաստագիր Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետին համապատասխան:

### Հոդված 2

1. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ 3-րդ հոդվածին համապատասխան արտանետումների սահմանափակման և կրճատման իր որոշակի քանակական պարտավորությունների կատարման դեպքում կայուն զարգացումը խրախուսելու նպատակով.

ա) իրականացնում է և/կամ հետագայում իր ազգային պայմաններին համապատասխան մշակում է այնպիսի քաղաքականություն և միջոցառումներ, ինչպիսիք են.

i) էներգիայի սպառման արդյունավետության բարձրացումը ազգային տնտեսության համապատասխան սեկտորներում,

ii) Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի կլանիչների և կուտակիչների որակի պահպանումը և բարձրացումը, հաշվի առնելով բնապահպանական համապատասխան միջազգային համաձայնագրերով ստանձնած իրենց պարտավորությունները, կայուն հիմքի վրա աջակցությունը անտառային տնտեսության վարման, անտառապատման և անտառվերականգնման ռացիոնալ մեթոդներին,

iii) գյուղատնտեսության կայուն ձևերի խրախուսումը կլիմայի փոփոխության հետ կապված դատողությունների լույսի ներքո,

iv) հետազոտական աշխատանքների կատարումը, էներգիայի նոր և վերականգնվող ձևերի, ածխածնի երկօքսիդ որսացող տեխնոլոգիաների և էկոլոգիապես մաքուր իննովացիոն տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը, մշակումը և ավելի լայն օգտագործումը,

v) շուկայական անհամաչափության, ֆիսկալ խթանիչների, հարկերից և մաքսերից ազատումների և Կոնվենցիայի նպատակներին հակասող սուբսիդիաների աստիճանական կրճատումը կամ աստիճանական վերացումը ջերմոցային գազերի արտանետումների աղբյուր հանդիսացող բոլոր սեկտորներում և շուկայական գործիքների կիրառումը,

vi) համապատասխան սեկտորներում անհրաժեշտ բարեփոխումների խրախուսումը՝ Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի սահմանափակմանը կամ կրճատմանը նպաստող քաղաքականության և միջոցների իրականացմանն աջակցելու նպատակով,

vii) տրանսպորտում Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի սահմանափակման և/կամ կրճատման միջոցառումները,

viii) մեթանի արտանետումների սահմանափակումը և/կամ կրճատումը նրանց ռեկուպերացիայի ենթարկելու և օգտագործելու ճանապարհով թափոնների հեռացման ժամանակ, ինչպես նաև էներգիայի արտադրության, տեղափոխման և բաշխման ժամանակ.

բ) Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետի i կետին համապատասխան՝ համագործակցում է նմանատիպ այլ Կողմերի հետ՝ նրանց քաղաքականության և սույն հոդվածին համապատասխան ձեռք առնվող միջոցառումների անհատական և ընդհանրական արդյունավետության բարձրացման նպատակով: Այդ նպատակով այդ Կողմերը ձեռնարկում են քայլեր այդ քաղաքականության և միջոցառումների վերաբերյալ իրենց փորձի տարածման և տեղեկատվության փոխանակման համար, ներառյալ նաև նրանց համադրման, թափանցիկության և արդյունավետության բարձրացման միջոցների մշակումը: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում, կամ հենց որ իրականում հնարավոր կլինի, քննարկում է այդպիսի համագործակցությանն աջակցելու ուղիները՝ հաշվի առնելով ամբողջ համապատասխան տեղեկատվությունը:

2. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը ձգտում են սահմանափակել կամ կրճատել օդային և ջրային փոխադրումների ժամանակ բունկերային վառելիքի օգտագործման հետևանքով առաջացած ջերմոցային գազերը, որոնք չեն կարգավորվում Մոնրեալի Արձանագրությամբ, գործելով, համապատասխանաբար, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության և Միջազգային ծովային կազմակերպության միջնորդությամբ:

3. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը, սույն հոդվածին համապատասխան, ձգտում են այնպես իրականացնել քաղաքականություն և միջոցառումներ, որ նվազագույնի հասցնեն անբարենպաստ հետևանքները, այդ թվում՝ կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքները, միջազգային առևտրի վրա անբարենպաստ ազդեցությունը

և սոցիալական, բնապահպանական և տնտեսական հետևանքները այլ Կողմերի, հատկապես զարգացող երկիր հանդիսացող Կողմերի համար և, մասնավորապես, նրանց համար, որոնք թվարկված են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերում՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կարող է, եթե անհրաժեշտ է, նախաձեռնել հետագա գործողություններ սույն կետի դրույթների իրականացմանը նպաստելու նպատակով:

4. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, եթե, հաշվի առնելով զանազան ազգային պայմանները և պոտենցիալ հետևանքները, որոշում է ընդունում վերը նշված 1-ին կետի «ա» ենթակետում նախատեսված ցանկացած քաղաքականության և միջոցառման համակարգման օգտակարության մասին, քննարկում է այդպիսի քաղաքականությունների և միջոցառումների համակարգման կարգավորման ուղիները և միջոցները:

### Հոդված 3

1. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը՝ առանձին կամ միասին, ապահովում են, որ Ա Հավելվածում թվարկված ջերմոցային գազերի ընդհանուր մարդածին արտանետումները՝ արտահայտված ածխածնի երկօքսիդի համարժեքով, չգերազանցեն իրենց համար սահմանված այն քանակությունները, որոնք նախատեսված են Բ Հավելվածում՝ արտանետումների սահմանափակման և կրճատման որոշակի քանակական պարտավորությունների կատարման համար, և, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, այդպիսի գազերի ընդհանուր արտանետումները պարտավորությունների գործողության 2008 թ. մինչև 2012 թ. ընկած ժամանակահատվածում 1990թ. մակարդակի համեմատությամբ առնվազն հինգ տոկոսով կրճատելու նպատակով:

2. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ սույն Արձանագրությամբ ստանձնած իր պարտավորությունների կատարման ասպարեզում 2005 թ. հասնում է որոշակի առաջընթացի:

3. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ սույն հոդվածով ստանձնած պարտավորությունների կատարման համար օգտագործում է աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների քանակի մաքուր այն փոփոխությունները և կլանիչների կողմից կատարված ջերմոցային գազերի աբսորբցիան, որոնք հանդիսանում են հողօգտագործման և անտառտնտեսության փոփոխությունների բնագավառում մարդու գործունեության անմիջական արդյունք և, սկսած 1990 թվականից, սահմանափակված էին անտառապատմամբ, անտառվերականգնմամբ և անտառազրկմամբ և չափվում են որպես ածխածնի պաշարների մեջ տեղի ունեցող հսկողության ենթակա փոփոխություններ պարտավորությունների գործողության յուրաքանչյուր ժամանակահատվածում: Աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների և կլանիչների կողմից նրանց աբսորբցիայի հետ կապված գործունեության մասին զեկույցները ներկայացվում են թափանցիկ, ստուգման համար մատչելի ձևով և քննարկվում են 7-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան:

4. Մինչև Կողմերի առաջին Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ Գլխական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմնի քննարկմանն է ներկայացնում տվյալներ 1990 թ. իր ունեցած ածխածնի պաշարների մակարդակի սահմանման և հետագա տարիներին նրա ունեցած ածխածնի պաշարների մեջ եղած փոփոխությունների գնահատման համար: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում կամ հետագայում, հենց որ դա գործնականորեն հնարավոր կլինի, ընդունում է որոշում այն պայմանների, կանոնների և ղեկավար դրույթների մասին, որոնք վերաբերում են այն բանին, թե գյուղատնտեսական հողերի օգտագործման ու հողօգտագործման և անտառային

տնտեսության կատեգորիաներում եղած փոփոխությունների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումների աղբյուրների և կլանիչների կողմից արսորբցիայի փոփոխությունների հետ կապված մարդու գործունեության ինչպիսի լրացուցիչ տեսակներ են ավելացվում 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի համար կամ հանվում են նրանցից՝ հաշվի առնելով անորոշության գործոնները, զեկույցների ներկայացման ժամանակ թափանցիկությունը, ստուգման հնարավորությունը, Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի մեթոդաբանական աշխատանքը, խորհրդակցությունները, որոնք, 5-րդ հոդվածի և Կողմերի Կոնֆերանսի որոշումների համաձայն, տրվում են Գիտական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմնի կողմից: Այսպիսի որոշումը կիրառվում է պարտավորությունների գործողության երկրորդ և հաջորդ ժամանակահատվածներում: Կողմը մարդու գործունեության լրացուցիչ տեսակների մասին այդ որոշումը կարող է որոշել կիրառել իր պարտավորությունների գործողության առաջին ժամանակահատվածում մեկ պայմանի դեպքում. եթե գործունեության այդ տեսակներն առկա լինեն 1990 թվականից:

5. 1-ին Հավելվածում ընդգրկված այն Կողմերը, որոնք իրականացնում են անցում դեպի շուկայական տնտեսություն, և որոնց համար բազային տարին կամ ժամանակաշրջանը սահմանվել է՝ ի կատարումն Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի երկրորդ նստաշրջանի 9/CP2 որոշման, այդ բազային տարին կամ ժամանակաշրջանը օգտագործում են սույն հոդվածով սահմանված իրենց պարտավորությունները կատարելու համար: 1-ին Հավելվածում ընդգրկված ցանկացած այլ Կողմ, որն իրականացնում է անցում դեպի շուկայական տնտեսություն, և որը Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն դեռևս չի ներկայացրել իր առաջին ազգային զեկույցը Կողմերի Կոնֆերանսին, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կարող է նաև ծանուցել այն մասին, որ ինքը այդ հոդվածով իր պարտավորություններն իրականացնելու համար մտադիր է 1990 թվականի փոխարեն օգտագործել այլ բազային տարի կամ ժամանակաշրջան: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, լուծում է այդպիսի ծանուցման ընդունման հարցը:

6. Հաշվի առնելով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 6-րդ կետը՝ Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, ընձեռում է որոշակի աստիճանի ճկունության հնարավորություն 1-ին Հավելվածում ընդգրկված այն Կողմերին, որոնք գտնվում են շուկայական տնտեսության անցման գործընթացում, բացի սույն հոդվածով նախատեսված պարտավորություններից, նրանց ստանձնած պարտավորությունների կատարման համար:

7. Արտանետումների սահմանափակման կամ կրճատման 2008 թվականից մինչև 2012 թվականն ընկած ժամանակահատվածի որոշակի քանակական պարտավորությունների գործողության առաջին շրջանում 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմի համար սահմանված որոշակի քանակությունը հավասար է Բ Հավելվածում ամրագրված, Ա Հավելվածում թվարկված ջերմոցային գազերի՝ 1990 թվականի կամ վերը՝ 5-րդ կետում նշված բազային տարվա կամ ժամանակաշրջանի համար նրա մաքուր, ընդհանուր ածխածնի երկօքսիդի համարժեքով արտահայտված մարդածին արտանետումների տոկոսային՝ հինգով բազմապատկած չափաբաժնին: 1-ին Հավելվածում ընդգրկված այն Կողմերը, որոնց համար հողօգտագործման և անտառային տնտեսության մեջ 1990թ. փոփոխությունները համարվել են ջերմոցային գազերի արտանետումների մաքուր աղբյուրներ, իրենց համար սահմանված քանակները հաշվարկելու համար 1990թ. բազային տարվա կամ բազային ժամանակահատվածի իրենց արտանետումներին ավելացնում են 1990թ. ընդհանուր մարդածին, ածխածնի երկօքսիդին համարժեք արտանետումները և հանում 1990թ. հողօգտագործման մեջ փոփոխությունների հետևանքով կլանիչների կողմից կատարված արսորբցիան:

8. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ, վերը՝ 7-րդ կետում նշվածը հաշվարկելիս 1995 թվականը կարող է օգտագործել որպես բազային տարի



հիդրոֆտորածխաջրածինների, պերֆտորածխաջրածինների և ծծմբի հեքսաֆտորիդի համար:

9. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի համար հետագա ժամանակահատվածների պարտավորությունները սահմանվում են սույն Արձանագրության Բ Հավելվածում կատարված ուղղումներում, որոնք ընդունվում են 21-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներին համապատասխան: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, այդպիսի պարտավորությունների քննարկումն սկսում է ոչ ուշ, քան վերը նշված 1-ին կետում հիշատակված պարտավորությունների գործողության առաջին ժամանակաշրջանի ավարտից յոթ տարի առաջ:

10. Արտանետումների կրճատման ցանկացած միավորը կամ սահմանված քանակի ցանկացած մասը, որը որևէ Կողմ ձեռք է բերում մյուս Կողմից, համաձայն 6-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի, ավելացվում է ձեռք բերող Կողմի համար սահմանված քանակներին:

11. Արտանետումների կրճատման ցանկացած միավորը կամ սահմանված քանակի ցանկացած մասը, որը որևէ Կողմ փոխանցում է մյուս Կողմին, համաձայն 6-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի, հանվում է փոխանցող Կողմի համար սահմանված քանակներից:

12. Արտանետումների կրճատման ցանկացած հավաստագրված միավոր, որը 12-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, որևէ Կողմ ձեռք է բերում մյուս Կողմից, ավելացվում է ձեռք բերող Կողմի համար սահմանված քանակներին:

13. Եթե 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմի արտանետումները պարտավորությունների գործողության այս կամ այն ժամանակահատվածում քիչ են, քան սույն հոդվածով նրա համար սահմանված քանակները, ապա այդ տարբերությունը այդ Կողմի խնդրանքով ավելացվում է պարտավորությունների գործողության հետագա ժամանակահատվածներում տվյալ Կողմի համար սահմանված քանակին:

14. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ ձգտում է վերը՝ 1-ին կետում նշված պարտավորություններն իրականացնել այնպես, որ զարգացող երկիր հանդիսացող Կողմերի և հատկապես այն Կողմերի համար, որոնք թվարկված են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերում, նվազագույնի հասցվեն սոցիալական, էկոլոգիական և տնտեսական հետևանքները: Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումների համաձայն՝ այդ կետերի իրականացման վերաբերյալ Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում քննարկում է այն հարցը, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել, որպեսզի նվազագույնի հասցվեն կլիմայի փոփոխության անբարենպաստ և/կամ Կողմերի համար վերը թվարկված կետերում հիշատակված պատասխան միջոցառումների հետևանքները: Քննարկվող հարցերի թվին են պատկանում ֆինանսավորման ապահովման, ապահովագրության և տեխնոլոգիաների փոխանցման հարցերը:

#### **Հոդված 4**

1. 1-ին Հավելվածում ընդգրկված բոլոր Կողմերը, որոնք հասել են համաձայնության, համատեղ կատարել են 3-րդ հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունները, համարվում են իրենց պարտավորությունները կատարած այն դեպքում, եթե Ա Հավելվածում թվարկված ջերմոցային գազերի՝ նրանց ընդհանուր համատեղ մարդածին արտանետումները՝ արտահայտված ամխածնի երկօքսիդի համարժեքով, չեն գերազանցում նրանց համար սահմանված այն քանակները, որոնք հաշվարկվել են որպես Բ Հավելվածում ամրագրված արտանետումների սահմանափակման և կրճատման պարտավորություններ՝ 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Արտանետման համապատասխան մակարդակը, որը սահմանվում է այդպիսի համաձայնագրի յուրաքանչյուր Կողմի համար, որոշվում է այդ համաձայնագրով:

2. Ցանկացած այդպիսի համաձայնագրի Կողմերը համաձայնագրի պայմանների մասին քարտուղարությանը ծանուցում են վավերացման, ընդունման, սույն Արձանագրության խրախուսման կամ նրան միանալու մասին իրենց փաստաթղթերը

պահպանության հանձնելու օրը: Քարտուղարությունն էլ իր հերթին տեղեկացնում է Կողմերին կամ Կոնվենցիան ստորագրողներին տվյալ համաձայնագրի պայմանների մասին:

3. Ցանկացած այսպիսի համաձայնագիր ուժի մեջ է մնում 3-րդ հոդվածի 7-րդ կետում նշված պարտավորությունների գործողության ընթացքում:

4. Եթե համատեղ գործող Կողմերը գործում են տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության շրջանակներում կամ նրա հետ միասին, ապա սույն Արձանագրությունն ընդունելուց հետո այդ կազմակերպության կազմում տեղի ունեցած ոչ մի փոփոխություն չի ազդում ըստ սույն Արձանագրության գոյություն ունեցող պարտավորությունների վրա: Կազմակերպության կազմի մեջ կատարված ցանկացած փոփոխություն կիրառվում է 3-րդ հոդվածի միայն այն պարտավորությունների նպատակների նկատմամբ, որոնք ընդունվել են այդ փոփոխությունից հետո:

5. Այն դեպքում, երբ այդպիսի համաձայնագրի կողմերը չեն հասել արտանետումների իրենց գումարային կրճատումների մակարդակին, այդպիսի համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում այդ համաձայնագրով սահմանված իր սեփական արտանետումների մակարդակի համար:

6. Եթե համատեղ գործող Կողմերը այն կատարում են տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության շրջանակներում, որը հանդիսանում է սույն Արձանագրության Կողմ, կամ նրա հետ միասին, ապա տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության յուրաքանչյուր անդամ պետություն, առանձին կամ տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության հետ միասին, գործելով 24-րդ հոդվածին համապատասխան, արտանետումների մակարդակի ընդհանուր գումարային կրճատումները չկատարելու դեպքում պատասխանատվություն է կրում արտանետումների իր մակարդակի համար, որոնց մասին ծանուցել է սույն հոդվածին համապատասխան:

## Հոդված 5

1. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ պարտավորությունների գործողության առաջին ժամանակահատվածից ոչ ուշ, քան մեկ տարի առաջ ստեղծում է Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային բոլոր գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների և կլանիչների կողմից արտոբեցիայի գնահատման ազգային համակարգ: Այդպիսի ազգային համակարգերի համար ղեկավար սկզբունքները, որոնք ընդգրկում են ստորև՝ 2-րդ կետում նշված մեթոդոլոգիաները, ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի կողմից, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, նրա առաջին նստաշրջանում:

2. Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային բոլոր գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների և կլանիչների կողմից արտոբեցիայի գնահատման համար որպես մեթոդոլոգիա ծառայում են այն մեթոդոլոգիաները, որոնք ընդունվել են Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի կողմից և հավանության են արժանացել Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի կողմից՝ նրա երրորդ նստաշրջանում: Եթե այդպիսի մեթոդոլոգիաները չեն օգտագործվում, ապա մտցվում են համապատասխան ճշտումներ այն մեթոդոլոգիաներին համապատասխան, որոնք արժանացել են որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի հավանությանը՝ նրա առաջին նստաշրջանում: Մասնավորապես, Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի աշխատանքների և այն խորհրդատվությունների հիման վրա, որոնք ներկայացնում է Գլխական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմինը, Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կանոնավոր ձևով ամփոփում է այդ մեթոդոլոգիաներն ու ճշտումները և, եթե անհրաժեշտ է լինում, վերանայում է դրանք՝ հաշվի առնելով Կողմերի Կոնֆերանսի

բոլոր համապատասխան որոշումները: Մեթոդաբանական կամ ճշտումների ցանկացած վերանայում օգտագործվում է միայն 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարումը հաստատելու նպատակով՝ վերը նշված վերանայումից հետո պարտավորությունների կատարման ցանկացած ժամանակաշրջանի համեմատությամբ:

3. Համամոլորակային տաքացման պոտենցիալները, որոնք օգտագործվում են մարդածին աղբյուրներից կատարվող՝ Ա Հավելվածում թվարկված ջերմոցային գազերի արտանետումների և կլանիչների կողմից արտաբցիայի՝ ըստ ածխածնի երկօքսիդի համարժեքության հաշվարկելու համար, համարվում են այն պոտենցիալները, որոնք ընդունվել են Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի կողմից և հավանության են արժանացել Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի կողմից՝ նրա երրորդ նստաշրջանում: Մասնավորապես, Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի աշխատանքների և Գիտական ու տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմնի կողմից տրված կոնսուլտացիաների հիման վրա Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կանոնավոր ձևով քննարկում է յուրաքանչյուր այդպիսի ջերմոցային գազի համամոլորակային տաքացման պոտենցիալը և, երբ անհրաժեշտ է, վերանայում է այն՝ լրիվ հաշվի առնելով Կողմերի Կոնֆերանսի ցանկացած համապատասխան որոշում: Համամոլորակային տաքացման այս կամ այն պոտենցիալի ցանկացած վերանայում կիրառվում է նշված վերանայումից հետո, պարտավորությունների կատարման ցանկացած ժամանակաշրջանի համեմատությամբ, 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների նկատմամբ:

## Հոդված 6

1. 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարման նպատակով 1-ին Հավելվածում ընդգրկված ցանկացած Կողմ կարող է փոխանցել ցանկացած այդպիսի Կողմին, կամ ձեռք բերել նրանից, արտանետումների կրճատման միավորներ, որոնք ստացվել են աղբյուրներից կատարված մարդածին արտանետումների կրճատմանը կամ տնտեսության ցանկացած սեկտորում ջերմոցային գազերի կլանիչներով արտաբցիայի մեծացմանն ուղղված միջոցների արդյունքում՝ պայմանով, որ.

ա) ցանկացած այդպիսի նախագիծ հաստատվել է համապատասխան Կողմերի կողմից,

բ) ցանկացած այդպիսի նախագիծ ենթադրում է արտանետումների կրճատում աղբյուրներից կամ կլանիչներով արտաբցիայի մեծացում՝ ի լրումն նրա, որը կարող էր լինել այլ դեպքում,

գ) նա ձեռք չի բերում արտանետումների կրճատման ոչ մի միավոր, եթե չի կատարում 5-րդ և 7-րդ հոդվածներով ստանձնած իր պարտավորությունները, և

դ) արտանետումների կրճատման միավորների ձեռքբերումը լրացնում է 3-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման նպատակով ներքին գործողությունները:

2. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում կամ հետագայում, հենց որ գործնականորեն հնարավոր կլինի, կարող է մշակել հետագա ղեկավար սկզբունքներ սույն հոդվածի իրականացման, այդ թվում նաև զեկույցների ստուգման և ներկայացման համար:

3. 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմն իր պատասխանատվությամբ կարող է լիազորել իրավաբանական անձանց, մասնակցել այն գործողություններին, որոնք, սույն հոդվածին համապատասխան, կատարվում են արտանետումների կրճատման միավորների ստացման, փոխանցման կամ ձեռքբերման համար:

4. Եթե, 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ի հայտ է եկել հարց, որը վերաբերում է 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմի՝ սույն կետում նշված պահանջների իրականացմանը, արտանետումների կրճատման միավորների փոխանցումը և ձեռքբերումը կարող է շարունակվել այդ հարցի ի հայտ գալուց հետո՝ պայմանով, որ Կողմերից ոչ մեկը ոչ

մի միավոր չի կարող օգտագործել 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարման համար մինչև այն ժամանակը, քանի դեռ չի լուծվել հոդվածի պայմանների կատարման հարցը:

## Հոդված 7

1. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի մարդածին աղբյուրներից կատարվող արտանետումների և կլանիչների կողմից աբսորբցիայի ամենամյա կադաստրի մեջ, որը ներկայացվում է Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումների համաձայն, ներառում է ստորև բերվող 4-րդ կետով որոշվող անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն՝ 3-րդ հոդվածի պահանջների կատարման նպատակով:

2. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող իր ազգային զեկույցի մեջ ներառում է ստորև բերվող 4-րդ կետի համաձայն լրացուցիչ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է այն բանի համար, որպեսզի ցույց տա, որ ինքը պահպանում է սույն Արձանագրությամբ ստանձնած իր պարտավորությունները:

3. 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ, վերը նշված 1-ին կետի պահանջին համապատասխան, ներկայացնում է պահանջվող ամենամյա տեղեկատվություն, սկսած առաջին կադաստրից, որը Կոնվենցիային համապատասխան պետք է ներկայացվի, սույն Արձանագրությունը այդ Կողմի համար ուժի մեջ մտնելուց հետո պարտավորությունների գործողության ժամանակաշրջանի առաջին տարվանից սկսած: Յուրաքանչյուր այդպիսի Կողմ վերը նշված 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը ներկայացնում է որպես ազգային առաջին զեկույցի մի մաս, որը պետք է ներկայացվի Կոնվենցիայի համաձայն՝ նրա համար սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց և ղեկավար սկզբունքներն ընդունելուց հետո, ինչպես այն նախատեսվում է ստորև բերվող 4-րդ կետում: Հետագա տեղեկատվության ներկայացման պարբերականությունը, որը պահանջվում է սույն հոդվածով, որոշում է Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, հաշվի առնելով ազգային զեկույցների ներկայացման համար Կողմերի Կոնֆերանսի կողմից ընդունված ցանկացած ցուցակ:

4. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում ընդունում և հետագայում պարբերաբար վերանայում է սույն հոդվածի համաձայն պահանջվող տեղեկատվության նախապատրաստման սկզբունքները՝ հաշվի առնելով 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի ազգային զեկույցների նախապատրաստման համար Կողմերի Կոնֆերանսի կողմից ընդունված ղեկավար սկզբունքները: Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, մինչև պարտականությունների կատարման առաջին ժամանակաշրջանի սկսվելը ընդունում է որոշում սահմանված քանակների հաշվառման կարգի մասին:

## Հոդված 8

1. Տեղեկատվությունը, որը, 7-րդ հոդվածին համապատասխան, ներկայացնում է 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ, քննարկվում է փորձագետների քննարկման խմբի կողմից՝ ի կատարումն Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումների և այն ղեկավար սկզբունքների, որոնք Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, ընդունել է այդ նպատակով՝ ստորև բերվող 4-րդ կետի համաձայն: Տեղեկատվությունը, որը, 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ներկայացնում է 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ, դիտվում է որպես ամենամյա բանաքաղության և արտանետումների ու սահմանված քանակությունների կադաստրի մի մաս: Ի լրումն դրան՝ տեղեկատվությունը, որը, 7-րդ հոդվածի 2-րդ կետի

համաձայն, ներկայացնում է 1-ին Հավելվածում ընդգրկված յուրաքանչյուր Կողմ, դիտվում է որպես զեկույցի քննարկման մի մաս:

2. Քննարկման խմբի փորձագետները համակարգվում են քարտուղարության կողմից և կազմվում են Կոնվենցիայի Կողմերի և, երբ անհրաժեշտ է, միջկառավարական կազմակերպությունների կողմից ընտրված թեկնածուների թվից՝ Կողմերի Կոնֆերանսի կողմից այդ նպատակների համար ընդունված ղեկավար ցուցումներին համապատասխան:

3. Քննարկման գործընթացի շրջանակներում այս կամ այն Կողմը կատարում է սույն Արձանագրության իրականացման բոլոր ասպեկտների մանրակրկիտ և համապարփակ տեխնիկական գնահատում: Քննարկման փորձագետների խմբերը Կողմերի Կոնֆերանսի համար, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, պատրաստում են զեկույց, որտեղ գնահատվում է Կողմի պարտավորությունների իրականացումը և ի հայտ են բերվում պարտավորությունների կատարման վրա ազդող ցանկացած պոտենցիալ հիմնահարց ու գործոն: Այդպիսի զեկույցները քարտուղարության միջոցով տարածվում են Կոնվենցիայի բոլոր Կողմերի շրջանում: Քարտուղարությունը կազմում է իրականացման հետ կապված այն հարցերի ցուցակը, որոնք ի հայտ են բերվել այդ զեկույցներում՝ որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի քննարկմանը ներկայացնելու համար:

4. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում ընդունում և հետագայում պարբերաբար վերանայում է փորձագետների քննարկման խմբերի կողմից ներկայացվող իրականացման ընթացքի քննարկման ղեկավար սկզբունքները՝ հաշվի առնելով Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումները:

5. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, հանգամանքներից ելնելով, Իրականացման օժանդակ մարմնի և Գիտական ու տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմնի աջակցությամբ քննարկում է.

ա) 7-րդ հոդվածի համաձայն Կողմերի ներկայացրած տեղեկատվությունը և դրա քննարկման մասին փորձագետների զեկույցը, որը կատարվել է սույն հոդվածին համապատասխան, և

բ) այն հարցերը, որոնք վերաբերում են իրականացմանը, և որոնք, վերը նշված 3-րդ կետի համաձայն, քարտուղարության կողմից մտցվել էին ցուցակի մեջ, ինչպես նաև՝ Կողմերի բարձրացրած ցանկացած հարց:

6. Վերը նշված 5-րդ կետում հիշատակվող տեղեկատվությունը քննարկելուց հետո Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, ցանկացած հարցի վերաբերյալ ընդունում է որոշումներ, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրության իրականացման համար:

## Հոդված 9

1. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, պարբերաբար քննարկում է սույն Արձանագրությունը գիտական լավագույն տեղեկատվության և կլիմայի փոփոխության ու նրա հետևանքների գնահատման, ինչպես նաև դրա հետ առնչվող տեխնիկական, սոցիալական և տնտեսական տեղեկատվության լույսի ներքո: Այդպիսի քննարկումները համակարգվում են Կոնվենցիայի շրջանակներում կատարվող համապատասխան քննարկումների, մասնավորապես՝ այն քննարկումների հետ, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով և 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով: Այդ քննարկումների հիման վրա Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, ընդունում է համապատասխան որոշումներ:

2. Առաջին քննարկումն անց է կացվում որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի երկրորդ նստաշրջանում: Հետագա քննարկումները անց են կացվում կանոնավոր կերպով և ժամանակին:

## Հոդված 10

Բոլոր Կողմերը, հաշվի առնելով իրենց ընդհանուր, բայց և տարբերակված պատասխանատվությունը և իրենց յուրահատուկ ազգային և տարածաշրջանային գերակայությունները, զարգացման բնագավառում իրենց նպատակները և պայմանները, գործողության մեջ չմտցնելով 1-ին Հավելվածում չընդգրկված Կողմերի համար նոր պարտավորություններ, սակայն նորից հաստատելով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորությունները և շարունակելով օժանդակել այդ պարտավորությունների իրականացմանը, կայուն զարգացման հասնելու համար, հաշվի առնելով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 7-րդ կետերը.

ա) ձևակերպում են, երբ այն տեղին է, և որքանով այն հնարավոր է, ծախսումների տեսակետից արդյունավետ, ազգային և համապատասխան դեպքերում արտանետումների տեղական ցուցանիշների որակի բարձրացման մասին տարածաշրջանային ծրագրեր, տվյալներ գործունեության և/կամ մոդելների մասին, որոնք արտացոլում են յուրաքանչյուր Կողմի սոցիալ-տնտեսական պայմանները Մոնրեալի Արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների և կլանիչների կողմից կատարվող աբսորբցիայի ազգային կադաստրների կազմման և պարբերաբար նորացման նպատակներով՝ օգտագործելով համադրվող մեթոդոլոգիաներ, որոնք կարժանանան Կողմերի Կոնֆերանսի հավանությանը՝ Կողմերի Կոնֆերանսի կողմից ազգային զեկույցների համար ընդունված ղեկավար սկզբունքներին համապատասխան,

բ) ձևակերպում, իրականացնում, հրատարակում և կանոնավոր կերպով նորացնում են ազգային և, համապատասխան դեպքերում, տարածաշրջանային ծրագրերը, որոնք նախատեսում են կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու և կլիմայի փոփոխությանը համապատասխան հարմարվողականությանն աջակցելու միջոցառումներ.

ի) այդպիսի ծրագրերը, մասնավորապես, վերաբերում են էներգետիկայի, տրանսպորտի և արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության, անտառային տնտեսության և թափոնների հեռացման սեկտորներին: Բացի դրանից, կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը կարելի է կատարելագործել հարմարվողական տեխնոլոգիաների և տարածքային պլանավորման մեթոդների կատարելագործման շնորհիվ.

ii) 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը, սույն Արձանագրությանը համաձայն, ներկայացնում են տեղեկատվություն իրենց գործողությունների մասին, ներառյալ 7-րդ հոդվածին համապատասխան ազգային ծրագրերը: Կողմերը ձգտում են համապատասխան դեպքերում իրենց ազգային զեկույցների մեջ մտցնել տեղեկատվություն այն ծրագրերի մասին, որոնք, ըստ համապատասխան Կողմի տեսակետի, նպաստում են կլիմայի փոփոխության և նրա անբարենպաստ հետևանքների հիմնահարցերի լուծմանը, ներառյալ նաև ջերմոցային գազերի արտանետումների աճման դեմ մղվող պայքարը, ինչպես նաև կլանիչների որակի և կլանիչներով կատարվող աբսորբցիայի որակի բարձրացումը, պոտենցիալի ամրացումը և հարմարվողականության միջոցառումները,

գ) համագործակցում են կլիմայի փոփոխության հետ կապ ունեցող՝ էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների, պրակտիկայի և գործընթացների, նույն-հատի մշակման, կիրառման և տարածման համար արդյունավետ պայմանների ստեղծման խրախուսմանը և ձեռնարկում են խրախուսման, թեթևացման և ֆինանսավորման գործնականում բոլոր իրագործելի քայլերը, կախված հանգամանքներից, այդպիսի տեխնոլոգիաների, նույն-հատի, պրակտիկայի և գործընթացների, հատկապես զարգացող երկրների ունեցած մուտքը, ներառյալ նաև էկոլոգիապես անվտանգ այն տեխնոլոգիաների արդյունավետ

փոխանցման քաղաքականության և ծրագրերի մշակումը, որոնք համարվում են պետության սեփականությունը կամ համարվում են հասարակության սեփականությունը, բարենպաստ պայմաններ ստեղծում մասնավոր սեկտորի համար այն տեսակետից, ինչը վերաբերում է էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների փոխանցմանը և դեպի նրանց ունեցած մուտքը,

դ) համագործակցում են գիտատեխնիկական ուսումնասիրություններում և նպաստում են սիստեմատիկ դիտարկումների համակարգի պահպանությանը և տվյալների արխիվների զարգացմանը, որպեսզի պակասեն այն անորոշությունները, որոնք կապված են կլիմայական համակարգի, կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքների և նրանց արձագանքելու տարբեր ռազմավարությունների տնտեսական և սոցիալական հետևանքների հետ, ինչպես նաև խրախուսում են ներքին պոտենցիալի զարգացումը և ամրապնդումը և գիտական ուսումնասիրությունների ու սիստեմատիկ դիտարկումների բնագավառում միջազգային ու միջկառավարական ջանքերին, ծրագրերին և ցանցերին մասնակցելու հնարավորությունը՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածը,

ե) ձեռնարկում են միջոցառումներ միջազգային մակարդակով համագործակցելու և խրախուսելու համար, լուսավորության և կադրերի պատրաստման ծրագրերի մշակման և իրագործման գործում օգտագործելով, երբ այն տեղին է, գոյություն ունեցող մարմինները, ներառյալ ազգային պոտենցիալի, մասնավորապես մարդկային և ինստիտուցիոն պոտենցիալի ամրապնդման ակտիվացումը, և աշխատակիցների փոխանակումը կամ աշխատակիցների գործուղումը այդ բնագավառում փորձագետների պատրաստման համար, հատկապես զարգացող երկրների համար, ինչպես նաև նպաստում են ազգային մակարդակով հասարակայնությանը տեղեկատվություն հաղորդելու և կլիմայի փոփոխության մասին տեղեկատվությանը հասարակայնության մուտքը ապահովելու համար: Կոնվենցիայի համապատասխան մարմինների շրջանակներում այդ գործունեության իրականացման համար ենթակա են մշակման ընդունելի պայմաններ՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածը,

զ) իր ազգային զեկույցում մտցնում է տեղեկատվություն ծրագրերի և այն գործունեության մասին, որն իրականացվում է Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումների համաձայն՝ ի կատարումն սույն հոդվածի, և

է) սույն հոդվածով պարտավորությունների իրականացման դեպքում ամբողջությամբ հաշվի է առնվում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 8-րդ կետը:

## Հոդված 11

1. 10-րդ հոդվածի իրականացման ժամանակ Կողմերը հաշվի են առնում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերը:

2. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի իրականացման համատեքստով, Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի և 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, և Կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմի կիրարկիչ օրգանի կամ օրգանների միջոցով, զարգացած երկիր հանդիսացող Կողմերը և Կոնվենցիայի II Հավելվածում ընդգրկված զարգացած այլ Կողմերը.

ա) ներկայացնում են նոր և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ բոլոր համաձայնեցված այն ծախսերի փակման համար, որոնք կրել են զարգացող երկիր հանդիսացող Կողմերը, երբ առաջ էին ընթանում ըստ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետով, 10-րդ հոդվածի «ա» ենթակետով ընդգրկված իրենց պարտավորությունների կատարման համար, և

բ) ներկայացնում են նաև այնպիսի ֆինանսական ռեսուրսներ, այդ թվում նաև տեխնոլոգիաների փոխանցման համար, որոնք անհրաժեշտ են զարգացող երկիր հանդիսացող Կողմերին բոլոր համաձայնեցված լրացուցիչ այն ծախսերի փակման համար, որոնք նրանք կրել են, երբ առաջ էին ընթանում ըստ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետով, 10-րդ հոդվածի «ա» ենթակետով ընդգրկված իրենց պարտավորությունների

կատարման ժամանակ, և համաձայնեցված են զարգացող երկիր հանդիսացող Կողմի և միջազգային մարմնի կամ մարմինների միջև, որոնց մասին, սույն հոդվածի համաձայն, հիշատակվում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածում:

Գոյություն ունեցող այս պարտավորությունների կատարման ժամանակ ուշադրություն է դարձվում միջոցների համապատասխան և կանխագուշակելի հոսքի պահանջի և զարգացած երկիր հանդիսացող Կողմերի միջև ծանրության համապատասխան բաշխման կարևորության վրա: Դեկլարար ցուցումները, որոնք մշակվել են այն մարմնի կամ մարմինների համար, որոնց վրա դրված է Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումներով սահմանված՝ Կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմների կառավարումը, այդ թվում նաև նրանք, որոնք համաձայնեցվել էին մինչև սույն Արձանագրության ընդունումը, սույն կետի դրույթների նկատմամբ կիրառվում է *mutatis mutandis*:

3. Չարգացած երկիր հանդիսացող Կողմերը և Կոնվենցիայի II Հավելվածում ընդգրկված այլ զարգացած Կողմերը 10-րդ հոդվածի իրականացման համար կարող են նաև տալ, իսկ զարգացող երկիր հանդիսացող Կողմերը՝ ստանալ, ֆինանսական միջոցներ երկկողմանի, տարածաշրջանային և այլ բազմակողմանի ուղիներով:

## Հոդված 12

1. Սույնով որոշվում է մաքուր զարգացման մեխանիզմը:

2. Մաքուր զարգացման մեխանիզմի նպատակը այն է, որ 1-ին Հավելվածում չընդգրկված Կողմերին օգնեն՝ ապահովելու կայուն զարգացում, օժանդակեն՝ հասնելու Կոնվենցիայի վերջնական նպատակին, և 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերին օգնեն՝ պահպանելու 3-րդ հոդվածի համաձայն սահմանված արտանետումների որոշակի քանակի սահմանափակման և կրճատման պարտավորությունների կատարման ապահովումը:

3. Մաքուր զարգացման մեխանիզմի շրջանակներում.

ա) 1-ին Հավելվածում չընդգրկված Կողմերն օգտվում են նախագծերով իրականացվող արտանետումների սերտիֆիկացված կրճատումների հանգեցնող գործունեությունից ստացված օգուտից, և

բ) 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը կարող են օգտագործել նախագծերով իրականացվող գործունեության արդյունքում ստացված արտանետումների սերտիֆիկացված կրճատումները՝ նպատակ ունենալով օժանդակել 3-րդ հոդվածի համաձայն սահմանված արտանետումների որոշակի քանակի սահմանափակման և կրճատման պարտավորությունների մի մասի պահպանմանը, ինչպես այն որոշել է Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն:

4. Մաքուր զարգացման մեխանիզմը ենթարկվում և առաջնորդվում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի ցուցումներով և ղեկավարվում է մաքուր զարգացման մեխանիզմի գործադիր խորհրդի կողմից:

5. Նախագծերով իրականացվող գործունեության յուրաքանչյուր տեսակի արդյունքում արտանետումների կրճատումները սերտիֆիկացնում են կիրարկիչ մարմինները, որոնք կնշանակվեն որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի կողմից՝ հետևյալի հիման վրա.

ա) յուրաքանչյուր շահագրգիռ Կողմի կամավոր մասնակցության,

բ) կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու հետ կապված իրական, չափվող և երկարաժամկետ առավելությունների, և

գ) բոլոր կրճատումներին կատարված լրացուցիչ արտանետումների կրճատման հիման վրա, որոնք կարող էին լինել նախագծերով իրականացվող սերտիֆիկացված գործունեության տեսակի բացակայության դեպքում:



6. Մաքուր զարգացման մեխանիզմը անհրաժեշտության դեպքում օգնում է նախագծերով իրականացվող սերտիֆիկացված գործունեության տեսակի ֆինանսավորման կազմակերպմանը:

7. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում, անկախ վերաքննության և նախագծերով իրականացվող գործունեությունից, ստուգման ճանապարհով մշակում է պայմաններ և ընթացակարգեր թափանցիկությունը, արդյունավետությունը և ենթահաշվետվությունը ապահովելու նպատակով:

8. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, ապահովում է, որ նախագծերով իրականացվող սերտիֆիկացված գործունեության տեսակներից ստացված միջոցների մի մասը օգտագործվի վարչական ծախսերի փակման համար, ինչպես նաև կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցություններից առավել խոցելի զարգացող երկիր հանդիսացող Կողմերին օգնություն ցույց տալու, հարմարավորականության հետ կապված ծախսերը մարելու համար:

9. Մաքուր զարգացման մեխանիզմում, այդ թվում նաև վերը նշված 3-րդ կետի «ա» ենթակետում հիշատակված գործունեության, ինչպես նաև արտանետումների սերտիֆիկացված կրճատումների ձեռքբերման մեջ կարող են մասնակցել մասնավոր և/կամ պետական սուբյեկտներ, և այդպիսի մասնակցությունը իրականացվում է բոլոր այն դեկավար ցուցումներին համապատասխան, որոնք կարող է տալ մաքուր զարգացման մեխանիզմի գործադիր խորհուրդը:

10. Արտանետումների սերտիֆիկացված կրճատումները, որոնց հասել են 2000 թվականից մինչև պարտավորությունների գործողության առաջին ժամանակահատվածն ընկած ժամանակաշրջանում, կարող են օգտագործվել պարտավորությունների գործողության առաջին ժամանակահատվածում պարտավորությունների կատարման պահպանման գործին օգնություն ցուցաբերելու համար:

### Հոդված 13

1. Կողմերի Կոնֆերանսը՝ Կոնվենցիայի գերագույն մարմինը, գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն:

2. Կոնվենցիայի այն Կողմերը, որոնք սույն Արձանագրության Կողմեր չեն հանդիսանում, կարող են իբրև դիտորդ մասնակցել որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի ցանկացած նստաշրջանին: Երբ Կողմերի Կոնֆերանսը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, սույն Արձանագրության վերաբերյալ որոշումներն ընդունվում են միայն սույն Արձանագրության Կողմերի կողմից:

3. Երբ Կողմերի Կոնֆերանսը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, Կողմերի Կոնֆերանսի Նախագահության ցանկացած անդամ, որը ներկայացնում է Կոնվենցիայի այն Կողմին, որը տվյալ պահին չի հանդիսանում սույն Արձանագրության Կողմ, փոխարինվում է սույն Արձանագրության Կողմերի կողմից, նրանց թվից ընտրված լրացուցիչ անդամով:

4. Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կանոնավոր կերպով քննարկում է սույն Արձանագրության իրականացումը և իր մանդատի շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք անհրաժեշտ են դրա արդյունավետ իրականացման համար: Նա կատարում է գործառույթներ, որոնք դրվել են իր վրա՝ սույն Արձանագրության համապատասխան, և

ա) սույն Արձանագրության դրույթներին համապատասխան նրան ներկայացված ամբողջ տեղեկատվության հիման վրա գնահատում է Կողմերի կողմից սույն Արձանագրության իրականացման ընթացքը, սույն Արձանագրության իրականացման համար ձեռնարկվող միջոցառումների ընդհանուր արդյունավետությունը, մասնավորապես՝

Էկոլոգիական, տնտեսական և սոցիալական արդյունավետությունը, ինչպես նաև նրանց կուտակումային ներգործությունը և Կոնվենցիայի նպատակներին հասնելու առաջընթացի աստիճանը,

բ) պարբերաբար քննարկում է սույն Արձանագրությամբ Կողմերի ստանձնած պարտավորությունները, պատշաճ ձևով հաշվի առնելով ցանկացած քննարկում, որոնք պահանջվում են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով և 7-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Կոնվենցիայի նպատակների, նրա իրականացման ժամանակ կուտակված փորձի և գիտական ու տեխնոլոգիական գիտելիքների էվոլյուցիայի լույսի ներքո և դրա հետ կապված քննարկում և ընդունում է կանոնավոր զեկույցներ սույն Արձանագրության իրականացման մասին,

գ) խրախուսում և հեշտացնում է կլիմայի փոփոխության և նրա հետևանքների հետ կապված հիմնահարցերի լուծման համար Կողմերի կողմից ձեռնարկվող միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակումը՝ հաշվի առնելով Կողմերի պայմանների, պատասխանատվության և հնարավորությունների միջև եղած տարբերությունները և սույն Արձանագրությամբ նրանց ստանձնած համապատասխան պարտավորությունները,

դ) երկու կամ ավելի Կողմերի խնդրանքով՝ աջակցում է կլիմայի փոփոխության և նրա հետևանքների հետ կապված հիմնահարցերի լուծման համար Կողմերի կողմից ձեռնարկվող միջոցառումների համակարգմանը՝ հաշվի առնելով Կողմերի պայմանների, պատասխանատվության և հնարավորությունների միջև եղած տարբերությունները և սույն Արձանագրությամբ նրանց ստանձնած համապատասխան պարտավորությունները,

ե) Կոնվենցիայի նպատակներին և սույն Արձանագրության դրույթներին համապատասխան և ամբողջությամբ հաշվի առնելով Կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի համապատասխան որոշումները՝ սույն Արձանագրության արդյունավետ իրականացման համար խրախուսում և ուղղորդում է համադրվող մեթոդոլոգիաների քննարկումները և պարբերաբար կատարվող ճշտումները, որոնք հետագայում պետք է խրախուսվեն որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի կողմից,

զ) ցանկացած հարցի վերաբերյալ ընդունում է հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրության իրականացման համար,

է) ձեռնարկում է միջոցառումներ լրացուցիչ ֆինանսական միջոցների հավաքագրման համար՝ 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն,

ը) ստեղծում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրության իրականացման համար,

թ) հայցում է և օգտագործում, երբ այն անհրաժեշտ է, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների և միջկառավարական ու ոչ կառավարական մարմինների ծառայությունները և համագործակցությունը և նրանց կողմից ներկայացվող տեղեկատվությունը, և

ժ) կատարում է այնպիսի այլ գործառնություններ, որոնք կարող են պահանջվել սույն Արձանագրության իրականացման համար, և քննարկում է ցանկացած խնդիր, որը հանդիսանում է Կողմերի Կոնֆերանսի որոշումների արդյունք:

5. Կոնվենցիայի համաձայն կիրառվող Կողմերի Կոնֆերանսի ընթացակարգերի և ֆինանսական ընթացակարգերի կանոնները կիրառվում են սույն Արձանագրության նկատմամբ *mutatis mutandis*, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կարող է կոնսենսուսի հիման վրա ընդունել այլ որոշում:

6. Որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի առաջին նստաշրջանը քարտուղարությունը հրավիրում է Կողմերի Կոնֆերանսի այն առաջիկա նստաշրջանի հետ միաժամանակ, որը պլանավորված էր սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո: Որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի հետագա հերթական նստաշրջանները հրավիրվում են ամեն տարի՝ Կողմերի Կոնֆերանսի նստաշրջանների հետ միաժամանակ, եթե Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, այլ որոշում չի ընդունում:

7. Որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսի արտահերթ նստաշրջաններ հրավիրվում են, երբ որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսը այն անհրաժեշտ է համարում, կամ՝ ցանկացած Կողմի գրավոր պահանջով՝ պայմանով, որ այն բանից հետո, երբ քարտուղարությունն այն ուղարկի Կողմերին, վեց ամսվա ընթացքում այն պաշտպանվի Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդի կողմից:

8. Միավորված ազգերի կազմակերպությունը, նրա մասնագիտացած հիմնարկությունները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև այդ կազմակերպությունների ցանկացած անդամ պետություն կամ նրանց կից դիտորդները, որոնք Կոնվենցիայի Կողմ չեն հանդիսանում, կարող են ներկայացվել որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն գործող Կողմերի Կոնֆերանսում: Ցանկացած մարմին կամ հիմնարկություն, լինի դա ազգային թե միջազգային, կառավարական թե ոչ կառավարական, որը բանիմաց է սույն Արձանագրության գործունեության ոլորտին պատկանող հարցերում, և որը հայտնել է քարտուղարությանը Կողմերի Կոնֆերանսում ներկայանալու իր ցանկության մասին, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, կարող է նրան մասնակցելու թույլտվություն ստանալ, բացառությամբ այն դեպքի, եթե դրան դեմ է ներկա Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդը: Գիտորդների թույլտվությունը և մասնակցությունը կարգավորվում է ընթացակարգի կանոններով, ինչպես դա նախատեսված է վերը նշված 5-րդ կետում:

#### Հոդված 14

1. Կոնվենցիայի 8-րդ հոդվածին համապատասխան ստեղծված քարտուղարությունը գործում է որպես սույն Արձանագրության քարտուղարություն:

2. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետը՝ քարտուղարության գործառույթների մասին, և 8-րդ հոդվածի 3-րդ կետը՝ քարտուղարության գործունեության կազմակերպման մասին, սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են *mutatis mutandis*: Բացի դրանից, քարտուղարությունը կատարում է սույն Արձանագրության համաձայն իր վրա դրված գործառույթները:

#### Հոդված 15

1. Գիտական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմինը և Իրականացման օժանդակ մարմինը, որոնք ստեղծվել են Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան, գործում են, համապատասխանաբար, որպես սույն Արձանագրության Գիտական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմին և Իրականացման օժանդակ մարմին: Կոնվենցիայի համաձայն՝ այդ երկու մարմիններին վերաբերող դրույթները սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են *mutatis mutandis*: Սույն Արձանագրության Գիտական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցման օժանդակ մարմնի և Իրականացման օժանդակ մարմնի նստաշրջանները անց են կացվում, համապատասխանաբար, Կոնվենցիայի Գիտական և տեխնիկական ասպեկտներով խորհրդակցության օժանդակ մարմնի և Իրականացման օժանդակ մարմնի նիստերի ժամանակ:

2. Կոնվենցիայի Կողմերը, որոնք չեն հանդիսանում սույն Արձանագրության Կողմեր, դիտորդի դերում կարող են մասնակցել օժանդակ մարմինների ցանկացած նստաշրջանի: Երբ օժանդակ մարմինները գործում են որպես սույն Արձանագրության օժանդակ մարմիններ, սույն Արձանագրության համար որոշումներն ընդունում են միայն սույն Արձանագրության Կողմերը:

3. Երբ Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան ստեղծված օժանդակ մարմինները կատարում են իրենց գործառույթները սույն Արձանագրությանը վերաբերող հարցերի նկատմամբ, օժանդակ մարմինների բյուրոյի ցանկացած անդամ, որը

տվյալ պահին ներկայացնում է սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող Կոնվենցիայի Կողմին, փոխարինվում է լրացուցիչ անդամով, որն ընտրվում է սույն Արձանագրության Կողմերի կողմից, նրանց թվից:

#### **Հոդված 16**

Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, քննարկում է, հենց որ գործնականորեն հնարավոր է, սույն Արձանագրության նկատմամբ բազմակողմանի խորհրդակցական գործընթացի կիրառման հարցը, որը հիշատակվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում, և այդ գործընթացի ձևավոխման հարցը, եթե անհրաժեշտ է, ցանկացած համապատասխան որոշման լույսի ներքո, որը կարող է ընդունվել Կողմերի Կոնֆերանսի կողմից: Ցանկացած բազմակողմանի խորհրդակցական գործընթաց, որը կարող է կիրառվել սույն Արձանագրության նկատմամբ, գործում է առանց վնասելու 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերին և մեխանիզմներին:

#### **Հոդված 17**

Կողմերի Կոնֆերանսը որոշում է, մասնավորապես, ստուգման, զեկույցների ներկայացման և արտանետումների առևտրի հաշվառման համար համապատասխան սկզբունքները, պայմանները, կանոնները և ղեկավար սկզբունքները: Բ Հավելվածում ընդգրկված Կողմերը կարող են մասնակցել արտանետումների առևտրին 3-րդ հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունների կատարման նպատակով: Ցանկացած այդպիսի առևտուր լրացնում է սույն հոդվածի համաձայն արտանետումների սահմանափակման և կրճատման որոշակի քանակական պարտավորությունների կատարման նպատակով իրագործվող ներքին գործողությունները:

#### **Հոդված 18**

Կողմերի Կոնֆերանսը, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն, իր առաջին նստաշրջանում հաստատում է սույն Արձանագրության դրույթները չպահպանելու դեպքերի որոշման և չպահպանելու դեպքերին արձագանքելու արդյունավետ ընթացակարգեր և մեխանիզմներ՝ այդ թվում մշակելով հետևանքների մոտավոր ցուցակը, հաշվի առնելով չկատարելու պատճառը, տեսակը, աստիճանը և հաճախականությունը: Սույն հոդվածի համաձայն՝ ցանկացած ընթացակարգ և մեխանիզմ, որը առաջ է բերում պարտադիր բնույթի հետևանքներ, ընդունվում է սույն Արձանագրության մեջ ուղղումներ կատարելու ճանապարհով:

#### **Հոդված 19**

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի դրույթները սույն Արձանագրության նկատմամբ կիրառվում են *mutatis mutandis*.

#### **Հոդված 20**

1. Ցանկացած Կողմ սույն Արձանագրության համար կարող է առաջարկել ուղղումներ:  
2. Սույն Արձանագրության համար առաջարկված ուղղումներն ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի հերթական նստաշրջանում, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն: Քարտուղարությունը սույն Արձանագրության համար առաջարկված ցանկացած ուղղման տեքստ հայտնում է Կողմերին ոչ ուշ, քան վեց ամիս

առաջ այն նստաշրջանի սկսվելուց, որտեղ ուղղումն առաջարկվում է ընդունել: Արձանագրության համար առաջարկված ուղղման տեքստը քարտուղարությունը հայտնում է նաև Կոնվենցիայի Կողմերին ու ստորագրողներին և, որպես տեղեկատվություն, Ավանդապահին:

3. Կողմերն անում են ամեն հնարավորը՝ համաձայնության գալու համար սույն Արձանագրության վերաբերյալ առաջարկված ցանկացած ուղղման կապակցությամբ՝ կոնսենսուսի հիման վրա: Եթե սպառված են կոնսենսուսի հասնելուն ուղղված բոլոր ջանքերը, և Կողմերը համաձայնության չեն հասել, ապա ուղղումը, որպես վերջին միջոցառում, ընդունվում է Կողմերի՝ տվյալ նստաշրջանում ներկա և քվեարկությանը մասնակցող ձայների երեք քառորդի մեծամասնությամբ: Քարտուղարությունն ընդունված ուղղման տեքստը հաղորդում է ավանդապահին, որն ընդունման համար այն ուղարկում է բոլոր Կողմերին:

4. Ուղղումն ընդունելու մասին փաստաթղթերը տրվում են ավանդապահի պահպանությանը: Վերը նշված 3-րդ կետին համաձայն՝ այն Կողմերի համար, որոնք ընդունել են ուղղումը, այն ուժի մեջ է մտնում ավանդապահի՝ ուղղումն ընդունելու մասին հայտնող՝ սույն Արձանագրության Կողմերի ամենաքիչը երեք քառորդի կողմից ուղարկված փաստաթղթերի ստացման իննսուներորդ օրը:

5. Ցանկացած այլ Կողմի համար ուղղումն ուժի մեջ է մտնում տվյալ Կողմի՝ ուղղումը ընդունելու մասին փաստաթուղթը ավանդապահի պահպանությանը հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

## Հոդված 21

1. Սույն Արձանագրության Հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը, և եթե ուղղակի այլ բան չի նախատեսվում, ապա սույն Արձանագրությանը կատարված հղումը նշանակում է նաև հղում նրա ցանկացած Հավելվածին: Ցանկացած Հավելված, որը ընդունվել է սույն Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո, սահմանափակվում է նկարագրական բնույթի ցուցակներով, ձևերով կամ ցանկացած այլ նյութով, որը վերաբերում է գիտական, տեխնիկական, գործընթացային կամ վարչական հարցերին:

2. Ցանկացած Կողմ կարող է կատարել սույն Արձանագրության համար հավելված ընդունելու առաջարկություն և կարող է առաջարկել ուղղումներ՝ սույն Արձանագրության հավելվածներում կատարելու համար:

3. Սույն Արձանագրության հավելվածները և Արձանագրության հավելվածներում կատարված ուղղումներն ընդունվում են Կողմերի Կոնֆերանսի հերթական նստաշրջանում, որը գործում է որպես սույն Արձանագրության Կողմերի խորհրդակցություն: Ցանկացած առաջարկվող հավելվածի և հավելվածում կատարվող ուղղման տեքստ քարտուղարությունը հաղորդում է Կողմերին ոչ ուշ, քան վեց ամիս առաջ այն նստաշրջանի սկսվելուց, որտեղ այն առաջարկվում է ընդունել: Առաջարկված ցանկացած հավելվածի կամ հավելվածում կատարվող ուղղման տեքստ քարտուղարությունը հայտնում է նաև Կոնվենցիայի Կողմերին ու սիգնատարիաներին և, որպես տեղեկատվություն, ավանդապահին:

4. Կողմերն անում են ամեն հնարավորը՝ առաջարկված ցանկացած հավելվածի կամ հավելվածում կատարվող ուղղման հարցում համաձայնության գալու համար՝ կոնսենսուսի հիման վրա: Եթե սպառված են կոնսենսուսի հասնելուն ուղղված բոլոր ջանքերը, և համաձայնության չեն հասել, ապա ուղղումը, որպես վերջին միջոցառում, ընդունվում է Կողմերի՝ տվյալ նստաշրջանում ներկա և քվեարկությանը մասնակցող ձայների երեք քառորդի մեծամասնությամբ: Քարտուղարությունը ընդունված հավելվածի կամ հավելվածի ուղղման տեքստը հաղորդում է ավանդապահին, որն ընդունման համար այն ուղարկում է բոլոր Կողմերին:

5. Ա և Բ Հավելվածներից բացի, ընդունված հավելվածը կամ այն հավելվածը, որի մեջ կատարվել են ուղղումներ վերը նշված 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան, սույն Արձանագրության բոլոր Կողմերի համար ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից այդ

Կողմերին տվյալ հավելվածի կամ ուղղում մտցված հավելվածի ընդունման մասին հաղորդագրությունն ուղարկվելու ամսաթվից վեց ամիս հետո, բացառությամբ այն Կողմերի, որոնք այդ ժամանակարևնթացքում գրավոր ծանուցել են ավանդապահին սույն հավելվածի կամ նրա մեջ կատարած ուղղումները չընդունելու մասին: Այն Կողմերի համար, որոնք չեղյալ են համարել հավելվածը կամ հավելվածում կատարած ուղղումը չընդունելու մասին իրենց ծանուցումը, հավելվածը կամ հավելվածում կատարած ուղղումը ուժի մեջ է մտնում ավանդապահի՝ այդպիսի ծանուցման չեղյալ հայտարարելու մասին հաղորդագրության ստացման ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

6. Եթե հավելվածի կամ նրա մեջ կատարված ուղղման ընդունումը կապված է սույն Արձանագրության մեջ ուղղում մտցնելու հետ, ապա այդպիսի հավելվածը կամ նրա մեջ կատարած ուղղումը ուժի մեջ չի մտնում այնքան ժամանակ, քանի դեռ ուժի մեջ չի մտել սույն Արձանագրության ուղղումը:

7. Սույն Արձանագրության Ա և Բ Հավելվածներում կատարված ուղղումներն ընդունվում և ուժի մեջ են մտնում 20-րդ հոդվածում շարադրված գործընթացին համապատասխան՝ պայմանով, որ Բ Հավելվածում կատարված ցանկացած ուղղում ընդունվում է միայն շոշափվող Կողմի գրավոր համաձայնության դեպքում:

## **Հոդված 22**

1. Բացառությամբ ստորև՝ 2-րդ կետում նախատեսված դեպքերի, յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:

2. Տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության շրջանակներում գտնվող հարցերի շուրջ կատարվող քվեարկությանը մասնակցում են սույն Արձանագրության Կողմ հանդիսացող իրենց անդամ պետությունների ձայների թվով: Չայնի իրավունքից չի օգտվում այն կազմակերպությունը, որի իրավունքից օգտվում է անդամ պետություններից որևէ մեկը կամ հակառակը:

## **Հոդված 23**

Սույն Արձանագրության ավանդապահի գործառույթները կատարում է Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

## **Հոդված 24**

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագման համար և ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն պետությունների և տնտեսական համագործակցության տարածաշրջանային այն կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են Կոնվենցիայի Կողմեր: Այն բաց է ստորագրման համար Սիավորված ազգերի կազմակերպության՝ Նյու Յորքում գտնվող Կենտրոնական հիմնարկություններում 1998 թվականի մարտի 16-ից մինչև 1999 թվականի մարտի 15-ը: Սույն Արձանագրությունը բացվում է միացման համար ստորագրման համար փակվելու ամսաթվի հաջորդ օրը: Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթղթերը պահպանության համար հանձնվում են ավանդապահին:

2. Տնտեսական համագործակցության ցանկացած տարածաշրջանային կազմակերպություն, որը դառնում է սույն Արձանագրության Կողմ, բայց այդ դեպքում նրա անդամ պետություններից ոչ մեկը Կողմ չի հանդիսանում, կրում է սույն Արձանագրությունից բխող բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպությունների մեկ կամ մի քանի անդամ պետություններ հանդիսանում են սույն Արձանագրության Կողմ, տվյալ կազմակերպությունը և նրա անդամ պետությունները ընդունում են որոշում սույն Արձանագրությունով իրենց ստանձնած պարտավորությունների կատարման իրենց

համապատասխան պարտականությունների մասին: Այդպիսի դեպքերում, սույն Արձանագրությանը համապատասխան, տվյալ կազմակերպությունը և նրա անդամ պետությունները իրավունք չունեն միաժամանակ օգտվելու իրավունքներից:

3. Վավերացման, ընդունման, խրախուսման կամ միացման մասին իրենց փաստաթղթերում տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպությունները հայտարարում են սույն Արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրազեկության սահմանների մասին: Այդ կազմակերպությունները տեղեկացնում են նաև ավանդապահին, իսկ նա էլ իր հերթին տեղեկացնում է Կողմերին նրանց իրավասության սահմանների ցանկացած էական փոփոխության մասին:

### **Հոդված 25**

1. Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում իննսուներորդ օրը այն բանից հետո, երբ ոչ պակաս, քան Կոնվենցիայի 55 Կողմ, այդ թվում նաև 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը, որոնց բաժին է ընկնում 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի ածխածնի երկօքսիդի 1990 թվականի ընդհանուր արտանետումների առնվազն 55 տոկոսը, պահպանության կհանձնեն վավերացման, ընդունման, խրախուսման կամ միացման մասին իրենց փաստաթղթերը:

2. Սույն հոդվածի նպատակների համար «1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերի 1990 թվականի ածխածնի երկօքսիդի ընդհանուր արտանետումներ» նշանակում է այն քանակը, որը 1-ին Հավելվածում ընդգրկված Կողմերը հայտարարել են սույն Արձանագրությունն ընդունելու օրը կամ ավելի վաղ՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն ներկայացրած իրենց առաջին ազգային զեկույցում:

3. Ամեն պետության կամ տնտեսական համագործակցության յուրաքանչյուր տարածաշրջանային կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում կամ խրախուսում է սույն Արձանագրությունը կամ միանում է նրան, վերը՝ 1-ին կետում նշված ուժի մեջ մտնելու պայմանները կատարելուց հետո սույն Արձանագրությունը նրա համար ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, խրախուսման կամ միացման մասին իր փաստաթղթերը հանձնելու ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

4. Սույն հոդվածի նպատակների համար տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության կողմից պահպանության հանձնված ոչ մի փաստաթուղթ չի դիտարկվում որպես հավելում այն փաստաթղթերին, որոնք հանձնվել են պահպանության այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից:

### **Հոդված 26**

Սույն Արձանագրությանը վերապահումներ չեն թույլատրվում:

### **Հոդված 27**

1. Այս կամ այն Կողմի համար Արձանագրությունը ուժի մեջ մտնելուց երեք տարի անց ցանկացած ժամանակ այդ Կողմը կարող է դուրս գալ Արձանագրությունից՝ ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցում:

2. Դուրս գալու այդպիսի ցանկացած դեպք ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին ծանուցումն ավանդապահի ստանալու ամսաթվից մեկ տարին լրանալուց հետո կամ ավելի ուշ՝ այն ժամկետում, որը նշված է դուրս գալու մասին ծանուցման մեջ:

3. Կոնվենցիայից դուրս եկող ցանկացած Կողմ համարվում է դուրս եկած նաև սույն Արձանագրությունից:

### **Հոդված 28**

1. Սույն Արձանագրության բնագիրը, որի տեքստերը անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով համարվում են հավասարապես վավերական (աուտենտիկ), հանձնվում է պահպանության Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

**ԿԱՏԱՐՎԵԼ Է** Կիտոյում՝ հազար ինը հարյուր իննսունյոթ թվականի դեկտեմբեր ամսի տասնմեկին:

**Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝** ստորև ստորագրողները, համապատասխանաբար դրա համար արտոնվածները, դրել են իրենց ստորագրությունները սույն Արձանագրության տակ՝ նշված օրերին:



## Հավելված Ա

### Չերմոցային գազեր

Ածխածնի երկօքսիդ ( $\text{CO}_2$ )

Մեթան ( $\text{CH}_4$ )

Ազոտի ենթօքսիդ ( $\text{N}_2\text{O}$ )

Հիդրոֆտորածխաջրածիններ (ՀՖԱ)

Պերֆտորածխաջրածիններ (ՊՖԱ)

Ծծմբի հեքսաֆտորիդ ( $\text{SF}_6$ )

### Արդյունների սեկտորներ/կատեգորիաներ

Էներգետիկա

Վառելիքի այրում

Էներգետիկ արդյունաբերություն

Մշակող արդյունաբերություն և շինարարություն

Տրանսպորտ

Այլ սեկտորներ

Այլ

Վառելիքի հանույթի և տեղափոխության ժամանակ առաջացած արտահոսքեր

Պինդ վառելիք

Նավթ և բնական գազ

Այլ

Արդյունաբերական գործընթացներ

Լեռնահանքային արդյունաբերության արտադրանք

Քիմիական արդյունաբերություն

Մետալուրգիա

Այլ արտադրություններ

Հալոգենացված ածխաջրածնային միացությունների և ծծմբի հեքսաֆտորիդի արտադրություն

Հալոգենացված ածխաջրածնային միացությունների և ծծմբի հեքսաֆտորիդի սպառում

Այլ

Լուծիչների և այլ նյութերի օգտագործում

Գյուղատնտեսություն

Աղիքային ֆերմենտացիա

Գոմաղբի հավաքում, պահպանություն և օգտագործում

Բրնձի արտադրություն

Գյուղատնտեսական հողեր

Սավանների կառավարվող այրում

Գյուղատնտեսական թափոնների այրում դաշտերում

Այլ

Թափոններ

Պինդ թափոնների հեռացումը գրունտ

Հոսքաջրերի վերամշակում

Թափոնների այրում

Այլ

**Հավելված Բ**

Կողմը	<u>Արտանետումների սահմանափակման կամ կրճատման քանակական որոշակի պարտավորություններ (տոկոսներով՝ բազային տարվա կամ ժամանակաշրջանի համեմատությամբ)</u>
Ավստրալիա	108
Ավստրիա	92
Բելգիա	92
Բուլղարիա <sup>x/</sup>	92
Հունգարիա <sup>x/</sup>	94
Գերմանիա	92
Հունաստան	92
Դանիա	92
Եվրոպական համագործակցություն	92
Իռլանդիա	92
Իսլանդիա	110
Իսպանիա	92
Իտալիա	92
Կանադա	94
Լատվիա <sup>x/</sup>	92
Լիտվա <sup>x/</sup>	92
Լիխտենշտեյն	92
Լյուքսեմբուրգ	92
Մոնակո	92
Նիդերլանդներ	92
Նոր Զելանդիա	100
Նորվեգիա	101
Լեհաստան <sup>x/</sup>	94
Պորտուգալիա	92
Ռուսաստանի Ֆեդերացիա <sup>x/</sup>	100
Ռումինիա <sup>x/</sup>	92
Սլովակիա <sup>x/</sup>	92
Սլովենիա <sup>x/</sup>	92
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	92
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	93
Ուկրաինա <sup>x/</sup>	100
Ֆինլանդիա	92
Ֆրանսիա	92
Խորվաթիա <sup>x/</sup>	95
Չեխիայի Հանրապետություն	92
Շվեյցարիա	92
Շվեդիա	92
Էստոնիա <sup>x/</sup>	92
Ճապոնիա	94

<sup>x/</sup> Կողմերը, որոնք իրականացնում են անցում դեպի շուկայական տնտեսություն: